

Ժամ զկրկին մատենագրուիս . հասարակարար առաքել . տեսաք եւ այն լի յանդիմանական բանիւ եւ սաստիւ կանոնագրել . , որ եւ ը . նմին եւ անգիր հրամանաւ զմեզ պատուհասել իբրեւ զոչ արժանիս ձեր անութե . եւ սրբալոյս մեռոնիս , զոր բնաւ չունէաք ակն ամէնեւին ի ձեր հայրական զթոյղ եւ քաղցր կամացդ , զայսպիսի բանս լսել եւ տեսանել : Այլ անուե . աղօթից սիրոյ եւ խաղաղութե . ակն ունէաք ի ձէնջ . նայ եւ մեր յուով տառապանացս եւ թրչառութեցս . զոր կրիմք սակաւ մխրթարութիս . եւ յուով խնամոյ (?) : Ձի այլ ուստէք ոչ ունիմք սիրոփանս եւ ուրախութիս . , բայց միայն զԱձ . եւ զքաղցր ձեր կամքդ : Իսկ զուք այժմ փոխանակ մեր յուսոյն որ առ ձեզ , ցառուցել . (s!) էք վսն . մեր մեղաց կշտամբանք եւ յանդիմանութի . էք հատուծն (s!) , գրով եւ անգիր սպառնացել մեզ առաքելցիք եւ զհայոց սոսկալի խորհրդածուի . սբ . պատարազին թերի եւ անընդունելի Այ . ցուցիք : Եւ այս ի սբ . Լուսաւորչին մեր մինչ առ քեզ ածաին . եւ անթերի խորհուրդ պատրւեցաւ , այժմ խոտան եւ հեռի ի ճամարտութենէն գրեցիք , զորս սոյն եւ ա . եկեղեցիք քրիստոնէից որ ը . տիեզերս յամ . յառաքելոցն սկսեալ այսպէս ունէին յառաջ . մանաւանդ եկեղեցին Հոռոմայ ի սրբոյն Պետրոսէ մինչեւ յերկրդ . Աղէկսանդր եւ Յուլիոս պապն , որք անջուր մատուցանէին զսբ . խորհուրդն , զոր ուսանիմք ի բազում պատմագրաց , նաեւ ի նամակաց նոցին , որ կան ի միջի մերում : Այսպէս եւ եկեղեցին յունաց յետոյ առան ի կիր զՂուերն ի սբ . խորհուրդն որպս . եւ զտօն ծնընդեանն ի ժամանակս Ոնորիա եւ Արկաղեայ , ի դեկտեմբերի իե . առին հրաման կատարել : Ձի՞նչ ասես այն ա . եկեղեցիքն ցայնքան ժամանակս խոտորեալք էին ի ճամարտութենէն եւ կամ հակուկ . զտան Այ . եւ ոչ հաճոյք : Կամ մերն Լուսաւորիչ որ առել . ի նոցանէ զայս մեզ աւանդեց . անտեղեակ էր ճամարտութեն . կամ վայրապար ոք էր եւ անփոյթ արար : Եւ մեր անապուր (?) որդիքս վերահասու եղաք ճամարտուեն . : Կամ յետոյ Ներսիսեանքն որ յերկրդ . Լուսաւորիչ զտան ազգիս , տգիտացան ի ճամարտութենէն , որ ոչ զազգիս Հայոց զանջուրն պակաս եւ թերի խոտեցին եւ ոչ զայլոց ազգացն ջրովն աւելորդ կամ խոտան ցուցին : Թէպէտ եւ յայժմ ի յաչս ձեր տգէտ եւ անպիտան երեւեցան : Ապայ մեք նոց . բանիցն եմք աշակերտք եւ նոց . ուղղափառութենն . եմք հաղորդ եւ մասն /

264բ . ակից , ուստի եւ զնչոյլ գիտութե . , զոր այժմ մեք եւ դուք ունիմք եւ պարծիմք ի նոցանէ առաք : Եւ այլ թէ զմեզ վսն . անհնազանդուե . առ ձեզ դատէք , զինչ այլ ինչ նշանակ եւ ցոյց հնազանդուե . , քան զայս , զի մեք որպս . զ . է . կինն զառնէդ միովէ բուռն հարել . հաց եւ հանդերձ զմեր ուտելով , միայն վսն . անըւանդ քո ի վեր . մեր կոչելոյ : Ընդէր եւ յայժմ անըւանդ քո ի վեր . մեր կոչմանէ զրկել ջանաս եւ այս սուտակասպաս , տգէտ եւ քսու արանց ունկնդրութր . , զորս ոչ արժանիս դատեցաք զանուանս նոց . ի գրի աստ յիշատակել , որք ըս . հին սկզբնաչարին զուղեղն թիւր ծանուցանեն յաչաղանօք : Եւ թէ այս ոչ է քսու եւ

բանսարկու արանց զործ , զայսքան ժամանակս որ ի սբ . յաթուղ դուք մեզ կթղկս . եւ հոգեւոր առաջնորդ կարգեցայք , զինչ թիւրուի . տեսար ի մեզ կամ անհնազանդուին . , բայց զայս եւ եթէ գիտեմք զանձին մեր խիղճ , որ վս . ձեր բազում նախատինս եւ անարդանս ընկալաք ի ներքնոց եւ յարտաքնոց : Այլ որ զկանոնական աւանդութի . եկեղեցոյն համագրեալ էիք եւ առ մեզ առաքեալ վիլյւի . հին եւ նոր գրոց եւ այլոց վղպաց . , այս ոչ էր նոր հասուծն , այլ երկիցս եւ երիցս անդամ բերաւ եւ մեք որպս . ըս . ժամանակին դէպ էր , զրեցաք եւ յղարկեցաք : Բայց զիտացիր ճամարտագէս , զի գրելք . վկայուի . կանոնիս յուովն այն է , զի չէ վսն . ջրի խորհրդոյ , այլ վսան . այլ իմանցմանց եւ յակամայ յայս բոնադրօսած , եւ որք գրեցին զայս սիղորայից ծառայեցին եւ ոչ ի ճամարտուի . իրին հայեցան . եւ զայս ուսցիս նախ ի խառնարանի խորհուրդ , զոր առաջին կարգեցաւ ի ձէնջ . որ մեծ եւ առաջին վրդպ . Դիոնէսիոս աշակերտն Պաւղոս իւե հարցմանն Տիտոսի Կրէտացոյ ի վեր . Այ . արարչագործ իմաստութեն . եւ նախախնամութեն . առնու , թողից զայլսն զներսեսի մեկնուի . յառակացն տես . նոյնպս . եւ զուովսն ի յայլ վկայութեցն . տեսցես , թէ ճամարիտ քննուք . կամիս ի վեր . ճամարտութե . հասու լինել : Այլ եւ զայս ասեմք յառաջին սբ . հարցն , որք չունէին դեռ եւս զջրոյն աւանդուին . եկեղեցիք , անջուրն եւ անապակն յարգեցաւ ի նոցանէ եւ մեզ ամենեցուն աւանդեցաւ . որ թէ կամիս ի բազմաց ուսցիս , որպս . գրեցաք յառաջ : Ըստ այնմ գրէ Կէղեստիանոս պապ Հոռոմայ , ի հարցմանն Պարսուժայի Անտիոքացոյ պատասխանի : Նոյնպէս եւ Յոհաննէս Ոսկերեբանն ի տեսուի . աւետարանին , ի բանն , որ ասէ , թէ ոչ արբից յայժմ հեռէ ի բերոյ յորթոյ , թէպէտ եւ ոմանք թիւր մտօք՝ վսն . Արիանոսաց ջրամատուցանողացն ազանդոյն ասին Յոհաննու գրել զայս , որ հեռի է եւ աւտար ի ճամարտութենէ ի վեր . այնմ իկ մտաց իմանալ զայս . զի հերձուածն /

265ա . այն վաղ բարձաւ նախ քան զնիկիայ ժողովն : Իսկ յորժամ ընկալան եկեղեցիք եւ զջրոյն խառնմանն աւանդութին . քարոզեցաւ , ընկալաւ այն յոմանց առաջնորդաց եկեղեցոյ . բայց առաջնոցն անջուր մատուցումն խորհրդոյն ոչ խոտեցաւ ի նոցանէ , որպս . զթիւրել . եւ մոլորելոց ի ճամարտութենէ , որպս . եւ այժմ ի ձէնջ խոտի եւ անարգի : Եւ զայս ոչ գովեմք յորժամ դուք ձերովք իմաստուն խորհրդակցաւք զմիոյ կողմանն վկայուին . ջատագով եղեալ , ժողովեալ գրէք առ մեզ աստի անտի քաղել . եւ զմիւս կողմանն ամէնեւին ոչ յիշէք : Ոչ գիտեմք թէ վսն . տգիտուե . գրողացն եւ թէ զմեզ իբրեւ զտղայս արհամարհէք եւ խաբել ջանայք . թէ ոչ վսն . հակառակուե . եւ բաժանման կամօք խորհիք : Ընդէ՞ր ոչ զերկուց կողմանց վիլյութեց . իմացուածն ի միտ առնոյք եւ ի մեր յախմարուիս . զընդուրին . թողոյք . յայնժամ ի մէնջ բառնայր ա . հակառակութե . եւ աւտար կարծիք :

Այլ զի տեսանեմք զոմանս հեթանոսաբար եւ առանց կրօնից անխտրաբար յամ . կերակուրս եւ ի բանս եւ ի գործս հեշտուե . վարին եւ ինքեանք յաչս ձեր